Տեղեկատվություն

ՀՀ Շիրակի մարզի առողջապահության և սոցիալական

ոլորտում 2023 թվականին

իրականացված աշխատանքների վերաբերյալ

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործում են թվով 26 բժշկական հաստատություն, որոնցում ծավալված մահճակալների թիվը 513 է, աշխատակիցների թիվը՝ 2202 ։

Մարզի բուժհաստատություններին 2023 թվականին տրամադրված պետական պատվերի բյուջեն կազմել է 5 228 848.4 հազ.դրամ, ինչը 2022 թվականի դեկտեմբերի 1-ի համեմատությամբ /4 746 335.9 հազ.դրամ/, ավելացել է 482 512.5 հազ. դրամով:

2023 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ վճարովի ծառայությունների դիմաց ստացված եկամուտների գումարը կազմել է 1 070 603.0 հազ.դրամ: 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ /989 765.0 հազ. դրամ/ ավելացել է 80 838.0 հազ. դրամով:

2023 թվականի նոյեմբերի 20-ի դրությամբ մարզի բժշկական կազմակերպությունների դեբիտորական պարտքը կազմում է 141 166.4 հազ.դրամ: 2022 թվականի համեմատ /122 964.7 հազ. դրամ / ավելացել է 18 201.7 հազ.դրամով, իսկ կրեդիտորական պարտքը՝ 718 618.8 հազ. դրամ: 2022 թվականի համեմատ /648 771.5 հազ.դրամ / ավելացել է 69 847.3 հազ. դրամով:

2023 թվականի ընթացքում մարզի բժշկական հաստատություններում իրականացվել են 17 080.0 հազ. դրամի վերանորոգման աշխատանքներ, մասնավորապես՝

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-9176,9 հազ. դրամ

«Ախուրյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-2833.0 հազ. դրամ

«Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ -1200.0 հազ. դրամ /վերելակի վերանորոգում/

«Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն» ՓԲԸ-499.0 հազ. դրամ

«Արթիկի մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն» ՓԲԸ-1.800.0 հազ. դրամ

«Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ-1250.0 հազ. դրամ

«Ախուրիկի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ-320.0 հազ. դրամ

2023 թվականի ընթացքում մարզի բժշկական հաստատությունները համալրվել են նոր և ժամանակակից սարքավորումներով /24.808.0 հազ.դրամ/, մասնավորապես՝

«Գյումրու բժշկական կենտրոն»ՓԲԸ- Սրտի ուլտրաձայնային հետազոտության սարքավորում 209.00,0 հազ.դրամ

« ՀՀ Շիրակի մարզի «Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ- «Բիոսիստեմս» ՍՊԸ «Boditech Afias-3» անալիզատոր 1.525.0հազ.դրամ /անհատույց օգտագործման/

«Արթիկի մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն» ՓԲԸ- «Բիոսիստեմս» ՍՊԸ «Boditech Afias-3» անալիզատոր 1525.0հազ.դրամ /անհատույց օգտագործման/

«Գյումրու Ն.Ա.Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա»ՓԲԸ- լիզինգով ձեռք է բերել «Finecare wondfo» անալիզատոր-858.0 հազ. դրամ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին երկու առաջարկություն, որից մեկը՝ «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ի «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կազմում միացման ձևով վերակազմակերպումը ընդունվել է (ՀՀ կառավարության 28 սեպտեմբերի 2023 թվականի N 1651-Ն որոշում), իսկ մյուսը՝ «Անիպեմզայի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Աղինի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի կազմում վերակազմակերպումը որպես բուժակ-մանկաբարձական կետ գտնվում է քննարկման փուլում:

ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 16-ի թիվ 352-Ա որոշմամբ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում «Բուժական գործ» մասնագիտությամբ ՀՀ Շիրակի մարզին տրամադրվել է նպատակային ուսուցման 3 տեղ: Թվով 13 դիմորդի տրամադրվել է տեղեկանք նպատակային տեղերի մրցույթին մասնակցելու նպատակով:

Հենաշարժողական, աղեստամոքսային համակարգի խնդիրներ ունեցող թվով 24 երեխայի տրամադրվել է Ջերմուկ «Արարատ» մոր ու մանկան առողջարանի ուղեգիր:

Ընթացիկ տարում Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմնի ընտրության

(նշանակման) հայտարարված մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված 10 մասնակից նշանակվել է բուժհաստատության տնօրենի պաշտոնում: 5 բուժհաստատություն ղեկավարվում է տնօրենի պաշտոնակատարի կողմից:

ՀՀ Շիրակի մարզի բժշկական հաստատություններում հաշվառվել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 2771 քաղաքացի, դեղորայք տրամադրվել է 213 քաղաքացու, ստացիոնար բուժման ուղեգիր տրամադրվել է 66 քաղաքացու, տարբեր հետազոտությունների ուղեգրվել է 298 քաղաքացի, 7 հղի ծննդաբերել է մարզի ծննդօգնության ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններում: ՀՀ Շիրակի մարզի բժշկական հաստատություններում աշխատանքի է ընդունվել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 6 անձ, 1 անձ անցնում է փորձաշրջան:

Իրականացվել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 282 ընտանիքի /925 անձ/ առաջնային կարիքների գնահատում և այդ գնահատման արդյունքում մարզի համայնքներին տրամադրված ֆինանսական միջոցներով գնվել է կենցաղային տեխնիկա, վառելանյութ և այլ անհրաժեշտ պարագաներ: Ֆինանսական աջակցություն է տրամադրվել թվով 106 բռնի տեղահանված քաղաքացու:

2023 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ վարչությունում քննարկվել է ՀՀ վարչապետին ուղղված և ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ վերահասցեագրված, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզպետին ուղղված ընդհանուր թվով 1640 քաղաքացու դիմում: Ուսումնասիրվել և քաղաքացիների սոցիալական խնդիրների վերաբերյալ ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի քննարկմանն է ներկայացվել դրամական օգնություն տրամադրելու վերաբերյալ 1356 եզրակացություն: ՀՀ Շիրակի մարզպետի որոշումներով ֆինանսական օգնություն է ստացել 914 քաղաքացի: Այլ բնույթի հարցերով գրավոր պարզաբանումներ է տրվել 58 քաղաքացու:

Հաշվետու ժամանակահատվածում տարածքային հաշվառման է վերցվել և ուղարկվել կենտրոնացված հաշվառման առանց ծնողական խնամքի մնացած 18 երեխայի անձնական գործ: Տվյալները մուտքագրվել են «Նորք» տեղեկատվավերլուծական համակարգի «Մանուկ» ենթահամակարգ: Հաշվառվել է 8 որդեգրողի թեկնածու: Տվյալները մուտքագրվել են «Նորք» տեղեկատվավերլուծական համակարգի «Մանուկ» ենթահամակարգ:

Հաշվառվել է 7 խնամատար ծնող։ Տվյալները մուտքագրվել են «Նորք» տեղեկատվավերլուծական համակարգի «Մանուկ» ենթահամակարգ։ Ընդհանուր առմամբ 4 խնամատար ընտանիքում խնամք և դաստիարակություն է ստանում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 7 երեխա։

Բացահայտվել է հանրակրթությունից դուրս մնացած 28 երեխա, իրականացված աշխատանքների արդյունքում 8 երեխա վերադարձել է հանրակրթություն։ Առողջական խնդիրներ և հաշմանդամություն ունեցող 11 երեխայի տվյալ ուղարկվել է Շիրակի մարզի 2 ՏՄԱԿ-ներին՝ երեխաների կրթության առանձնահատուկ պայմանի կարիքը գնահատելու նպատակով։

Կանխարգելվել է 11 երեխայի հանրակրթությունից դուրս մնալը։

Վարչության մասնագետները իրականացրել են 35 տունայց, բազմամասնագիտական խմբի կողմից կազմակերպվել և իրականացվել է 48 դեպքի քննարկում, մասնակցել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների նիստերին ներկայացվող 12 քննարկման։

Կանխարգելվել է 9 ընտանիքի 17 երեխայի մուտքը հաստատություններ։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Լ.ԱՍԼԱՆՅԱՆ